



Ardshinbank

FO 75-25-01-01

Էջ 1 / 5

Հաշվարկային քարտով դրամական միջոցների ապահովվածությամբ վարկային գծի տրամադրման պայմաններ

Խմբագրություն: 01

Ամսաթիվ: «15» 02. 2018թ.

Հ/Հ	1. Հիմնական պայմաններ			
1.2	Նպատակ	Սպառողական		
1.3	Ապահովվածություն	Գրավ		
1.4	Արժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո
1.5	Վարկային գծի նվազագույն սահմանաչափ	100.000 ՀՀ դրամ	250 ԱՄՆ դոլար	200 Եվրո
1.6	Վարկային գծի առավելագույն սահմանաչափ	100.000.000 ՀՀ դրամ****		
1.7	Նվազագույն ժամկետ	1 ամիս		
1.8	Առավելագույն ժամկետ	60 ամիս, չի կարող գերազանցել ավանդի ժամկետի ավարտը		
1.9	Վարկային գծի տարեկան անվանական տոկոսադրույք*			
1.9.1.	Վարկային գծի արժույթ ՀՀ դրամ Գրավադրվող միջոցի արժույթ ՀՀ դրամ	«գրավադրվող միջոցների տոկոսադրույք +1%», բանաձևով, բայց ոչ պակաս, քան Բանկում գործող դրամային ժամկետային ավանդի առավելագույն տոկոսադրույքը		
1.9.2.	Վարկային գծի արժույթ ՀՀ դրամ Գրավադրվող միջոցի արժույթ ԱՄՆ դոլար/Եվրո/Ռուբլի	«գրավադրվող միջոցների տոկոսադրույք + 4%» բանաձևով բայց ոչ պակաս, քան Բանկում գործող դրամային ժամկետային ավանդի առավելագույն տոկոսադրույքը		
1.9.3.	ԱՄՆ դոլար, Եվրո նույնանուն արժույթով գրավի և վարկային գծի դեպքում	«գրավադրվող միջոցների տոկոսադրույք + 2%» բանաձևով		
1.9.4.	Վարկային գծի արժույթ ԱՄՆ դոլար Գրավադրվող միջոցի արժույթ ՀՀ դրամ	«գրավադրվող միջոցների տոկոսադրույք + 1%»		
1.9.5.	Վարկային գծի արժույթ Եվրո Գրավադրվող միջոցի արժույթ ՀՀ դրամ	«գրավադրվող միջոցների տոկոսադրույք +1%»,		
1.10	Վարկ/գրավ***			
1.10.1	Նույնանուն արժույթով գրավի և վարկային գծի կամ ԱՄՆ դոլար/Եվրո արժույթով գրավի և ՀՀ դրամ արժույթով վարկային գծի դեպքերում	գրավի արժեքի մինչև 94%-ի չափով		
1.10.2	Վարկային գծի արժույթ ՀՀ դրամ Գրավադրվող միջոցի արժույթ Ռուբլի	գրավի արժեքի մինչև 60%-ի չափով		
1.10.3	Վարկային գծի արժույթ ԱՄՆ դոլար/Եվրո Գրավադրվող միջոցի արժույթ ՀՀ դրամ	գրավի արժեքի մինչև 80%-ի չափով		
2. Միջնորդավճարներ				
2.1.	Դիմում-հայտի ուսումնասիրության վճար	Չի սահմանվում		
2.2.	Տրամադրման միջնորդավճար	Չի սահմանվում		
2.3.	Վարկի սպասարկման վճար	Չի սահմանվում		
3. Վարկառուին և գրավատուին ներկայացվող պահանջներ				
3.1.	Վարկառու	18 տարեկանը լրացած ֆիզիկական անձ		
3.2.	Գրավատու	Վարկառու		
3.3.	Վարկառուի վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ	Չեն սահմանվում		



Ardshinbank

FO 75-25-01-01

Էջ 2 / 5

Հաշվարկային քարտով դրամական միջոցների ապահովվածությամբ վարկային գծի տրամադրման պայմաններ

Խմբագրություն: 01

Ամսաթիվ: «15» 02. 2018թ.

3.4.	Վարկային պարտավորությունների նկատմամբ պահանջներ	Չեն սահմանվում
3.5.	Քաղաքացիության և գրանցման նկատմամբ պահանջներ	Չեն սահմանվում
3.6.	Անձնական տվյալների նկատմամբ պահանջներ	<ul style="list-style-type: none"> բջջային հեռախոսահամարի առկայություն էլեկտրոնային փոստի հասցեի առկայություն
4. Գրավի առարկային ներկայացվող պահանջներ		
4.1.	Գրավի տեսակ	Որպես ավանդ Բանկում ներդրված դրամական միջոցներ և դրա նկատմամբ պահանջի իրավունք
4.2.	Գրավադրվող միջոցների քանակ	Մեկ վարկը կարող է ապահովված լինել Բանկում ներդրված մի քանի ավանդով, եթե բոլորի համար գործում են սպասարկման նույն պայմանները (տոկոսադրույք, արժույթ)
4.3.	Գրավի առարկայի նկատմամբ սահմանափակումներ	<p>Ավանդային պայմանագրով Բանկում ներդրված ավանդը և դրա նկատմամբ պահանջի իրավունքը կարող է հանդիսանալ գրավի առարկա, եթե դրանում նշված միջոցները</p> <ol style="list-style-type: none"> արգելանքի տակ չեն, չեն հանդիսանում այլ (այդ թվում՝ երրորդ անձանց տրամադրված) վարկի (պարտավորության) ապահովման միջոց հանդիսացող գրավի առարկա, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանցով ապահովված բոլոր, ներառյալ նոր տրամադրվող, վարկերի հանրագումարի համար պահպանվում է սույն պայմանների 1.10. կետով սահմանված առավելագույն վարկ/գրավ հարաբերակցությունը
5. Վարկի տրամադրում և սպասարկում		
5.1.	Տրամադրման/հայտի ներկայացման վայր	Բանկային/ավանդային հաշվի պայմանագրերի կնքման մասնաճյուղ
5.2.	Տրամադրման եղանակ	Անկանխիկ
5.3.	Տրամադրման ձև	Միանվագ կամ մաս-մաս
5.4.	Վարկային գծի տոկոսագումարի հաշվարկման ձև****	<p>Տոկոսագումարը հաշվարկվում է վարկային գծի օգտագործված մասի դիմաց անվանական տոկոսադրույքի կիրառման միջոցով հետևյալ բանաձևով՝</p> $I = R * L / D$ <p>որտեղ</p> <p>I՝ մեկ օրվա տոկոսագումարն է</p> <p>R՝ անվանական տոկոս ադրույքը</p> <p>L՝ վարկային գծի օգտագործված մասը</p> <p>D՝ տարվա փաստացի օրերի քանակը</p>
5.5.	Վարկային գծի մարման կարգ	Ոչ հավասարաչափ (դիֆերենցված), պարտադիր մարման չափով
5.6.	Վարկային գծի տոկոսների մարում	Ամսական, Վճարային ժամանակահատվածի ընթացքում
5.7.	Պարտադիր մարման չափ	<ul style="list-style-type: none"> Հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ քարտային հաշվի գերաձախսի (դեբիտորական պարտք) դիմաց հաշվարկված տույժ, Հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ քարտային հաշվի գերաձախս (դեբիտորական պարտք),



Ardshinbank

FO 75-25-01-01


Էջ 3 / 5

Հաշվարկային քարտով դրամական միջոցների ապահովվածությամբ վարկային գծի տրամադրման պայմաններ

Խմբագրություն: 01

Ամսաթիվ: «15» 02. 2018թ.

		<ul style="list-style-type: none"> • Հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ Պայմանագրով, Վարկային գծի պայմանագրով և (կամ) Խառը պայմանագրով նախատեսված վճարման ենթակա այլ միջնորդավճարներ, • Նախորդ ժամանակաշրջանի համար ժամկետին չվերադարձված տոկոսագումար (այդ թվում նաև ժամկետին չվերադարձված Կրեդիտի դիմաց հաշվարկված տոկոս և ժամկետանց տոկոսների տույժ)՝ առկայության դեպքում, • Նախորդ ժամանակաշրջանի համար ժամկետին չվերադարձված Նվազագույն մարման սահմանաչափեր՝ առկայության դեպքում, • Հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ Վարկային գծի օգտագործված մասի դիմաց հաշվարկված (կուտակված) տոկոսագումար, Նվազագույն մարման սահմանաչափ
5.8.	Պարտադիր մարման չափի միջանկյալ ժամկետ	Վճարային ժամանակահատվածի ընթացքում
5.9.	Փոխհաշվարկի օր	Յուրաքանչյուր ամսվա 1-ը, եթե այլ օր չի նշվել հաճախորդի դիմումում
5.10.	Նվազագույն մարման սահմանաչափ	0%
5.11.	Մարման արտոնյալ ժամանակահատված	Չի սահմանվում
5.12.	Վճարային ժամանակահատված	Տվյալ հաշվետու ժամանակահատվածի երկրորդ օրվանից մինչև հերթական փոխհաշվարկի օրը ներառյալ
5.13.	Վարկային գծի երկարաձգում	<p>Իրականացվում է հաճախորդի դիմումի համաձայն վարկավորման պայմաններով սահմանված առավելագույն ժամկետի չափով, ընդ որում</p> <ol style="list-style-type: none"> 1. Ժամկետային ավանդի գրավադրմամբ վարկային գծի երկարաձգման համար գրավադրված ժամկետային ավանդի վերջնաժամկետը պետք է մեծ կամ հավասար լինի վարկային գծի երկարաձգման վերջնաժամկետից, 2. Բանկում ավանդների տրամադրման նույն պայմանների բացակայության դեպքում երկարաձգման պահին համապատասխանաբար վերանայվում են նաև վարկի պայմանները, 3. Վարկային գծի երկարաձգման դիմումը հաճախորդի կողմից ներկայացվում է ոչ ուշ, քան վարկային գծի ժամկետի ավարտից 2 աշխատանքային օր առաջ
5.14.	Վարկային սահմանաչափի ավելացում	Վարկային գծի սահմանաչափի ավելացումը իրականացվում է միայն հաճախորդի դիմումի հիման վրա և սահմանված վարկ/գրավ հարաբերակցության շրջանակներում
6. Վարկի տրամադրման/երկարաձգման վերաբերյալ որոշման կայացում		
6.1.	Դրական որոշման գործոններ	Վարկառուն, ինչպես նաև գրավի առարկան բավարարում են սույն պայմաններով սահմանված պահանջներին
6.2.	Որոշման կայացման ժամկետ****	Առավելագույնը 1 աշխատանքային օր

 Ardshinbank	FO 75-25-01-01	Էջ 4 / 5
	Հաշվարկային քարտով դրամական միջոցների ապահովվածությամբ վարկային գծի տրամադրման պայմաններ	Խմբագրություն: 01
		Ամսաթիվ: «15» 02. 2018թ.

6.3.	Վարկի տրամադրման/երկարաձգման ժամկետ	Որոշման կայացումից հետո առավելագույնը 1 աշխատանքային օր
7. Տոյժեր և տուգանքներ		
7.1.	Ժամկետանց տոկոսագումարների գծով	Չի սահմանվում
7.2.	Ժամկետանց վարկի գումարի գծով տարեկան տոկոսներ	24%
7.3.	Վարկի գումարի ամբողջությամբ կամ մասնակի վաղաժամկետ մարման դեպքում	Չի սահմանվում

* Վարկային գծի անվանական տոկոսադրույքը չի կարող գերազանցել ՀՀ ԿԲ բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը:

** Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգ

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է ներքոհիշյալ բանաձևով՝

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

Որտեղ՝

i - տարեկան փաստացի տոկոսադրույքն է (APR),

A - Վարկային գծի գումարը (Բանկի կողմից Հաճախորդին տրամադրված Վարկային գծի սկզբնական գումարը),

n - Վարկային գծի մարմանն ուղղված վճարի թիվը,


N - Վարկային գծի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը,

K_n - Վարկային գծի մարմանն ուղղված n -րդ վճարի գումարը,

D_n - Վարկային գծի տրամադրման օրից մինչև Վարկային գծի մարմանն ուղղված n -րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով,

i -ն՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը, կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են Վարկային գծի պայմանագրից կամ այլ կերպ:

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է Վարկային գծի պայմանագրի կնքման պահին՝ ենթադրելով, որ Վարկային գծի պայմանագիրը գործելու է Հաշվարկային քարտով վարկային գծի պայմանագիր կնքելու կամ Վարկային քարտի տրամադրման, սպասարկման, վարկային գծի և(կամ) գրավի խառը պայմանագիր կնքելու առաջարկ-դիմումում նշված ժամկետով, և կողմերը պատշաճ կերպով ու պայմանավորված ժամկետներում կատարելու են Վարկային գծի պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

 Ardshinbank	FO 75-25-01-01	Էջ 5 / 5
	Հաշվարկային քարտով դրամական միջոցների ապահովվածությամբ վարկային գծի տրամադրման պայմաններ	Խմբագրություն: 01
		Ամսաթիվ: «15» 02. 2018թ.

Մարման արտոնյալ ժամանակահատվածը (առկայության դեպքում) հաշվի չի առնվում տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկում:

Տարվա մեջ օրերի բազային թիվը ընդունված է տարվա փաստացի օրացուցային օրերի քանակը,

Հաշվարկված տարեկան փաստացի տոկոսադրույքի մեծությունը կլորացվում է առնվազն մինչև մեկ հարյուրերորդական և բազմապատկվում է 100-ով՝ տոկոսային մեծություն ստանալու համար:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկում չեն ներառվում՝

- Լրացուցիչ վճարային քարտի թողարկման և տարեկան սպասարկման վարձը Կրեդիտի մարման պարտավորության խախտման և վճարային սահմանաչափի գերազանցման համար հաշվարկվող տոկոսները, տուժանքը (տույժերը և տուգանքները),
- Կանխիկացման և կանխիկի մուտքագրման համար միջնորդավճարները,
- Տարբեր տեսակի փաստաթղթերի տրամադրման համար վճարները,
- Արժույթի փոխարկման համար միջնորդավճարները:

*** Տարանուն արժույթների դեպքում առավելագույն սահմանաչափը հաշվարկվում է հիմք ընդունելով տվյալ օրվա ՀՀ ԿԲ սահմանած փոխարժեքը:

**** Տոկոսագումարի հաշվարկման օրինակ

Վարկային գծի սահմանաչափ – 5.000.000 ՀՀ դրամ

Օգտագործված մաս-1.825.000 ՀՀ դրամ

Վարկի տարեկան տոկոսադրույք – 20%

Տարվա օրերի քանակ – 365 օր

Օրական կուտակվող տոկոսի մեծությունը կկազմի – 1000 ՀՀ դրամ (տոկոսագումարը կկազմի $1.825.000 * 20\% / 365 = 1000$ ՀՀ դրամ)

***** Հաճախորդի Բանկում գործող դրամական միջոցներով ապահովված վարկային գծերի ներառյալ հայցվող սահմանաչափի մնացորդների հանրագումարը 100.000.000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթը գերազանցելու դեպքում, վարկային գծի պայմանները հաստատվում են պայմանագրային հիմունքներով և որոշման կայացման գործընթացը կարող է գերազանցել 1 աշխատանքային օրը:

Զգուշացում՝

Հաճախորդի կողմից տոկոսագումարների և վարկի գումարների մարումները ժամանակին չկատարելու դեպքում այդ մասին տեղեկատվությունը կտրամադրվի ՀՀ Կենտրոնական Բանկի վարկային ռեգիստրին և ԱԲՈԱ Քրեդիտ Ռեփորտինգ ՓԲԸ-ին: